SORHUL, Documenti di Architettura Armena. V. 20, Milano, OEMME Edizioni, 1989, 111. p.

ՍՈՒՐՀՈՒԼ, Հայ ճարտարապետության վավերագրեր, հ. 20, Միլան, ՕԷՄՄԷ հրատարակչություն, 1989, 111 էջ։

Պատմական Ատրպատականի՝ Հյուսիսային Իրանի հայաբնակ գավառներում բազմաթիվ մեծ ու փոքր եկեղեցիներ են սփռված։ Տարբեր առիթներով հպանցիկ ակնարկներ են նվիրվել հայ եկեղեցաշինության այս հուշարձաններին։ Բայց միայն վերջերս՝ 1989 թ., Միլանում լույս տեսած «Հայ ճարտարապետության վավերագրեր» հայտնի մատենաշարի 20-րդ հատորում են պարփակվել Սալմաստ-Ուրմիայի, Թավրիզի և Մակուի (մինչև XX դ., վասպուրականի նահանգ) հայ կրոնական շինությունները ամբողջությամբ։

Հատորի հեղինակ Աղրիանո Ալպագո-Նովելլոն ընթերցողներին ծանոթացնում է իտալա-հայկական երեք արշավախմբերի կատարած աշխատանքներին (1976, 1977, 1984)՝ «Իրանական Ադրբեջանում գործող արշավախմբերի հաշվետվություն» խորագրով։ 1976—1977 թթ. հետազոտությունների արդյունքները նախապես հրատարակվել են, իսկ 1984-ինը առաջին անգամ այս գրքում է տպագրվում։

Գրքի սոսաջին՝ «Պատմական ակնարկ» հոդվածում հեղինակը ամփոփ ներկայացնում է Հյուսիսային Իրանում ապրող հայերի պատմությունը և վկայում, որ Պարսկաստանում հայերի մասին առաջին տեղեկությունները գալիս են դեռևս մ. թ. ա. VI դ.։ Իսկ Շահ Աբասի կողմից հայերի բռնի տեղահանությունից և Պարսկաստանում վերաբնակեցնելուց հետո հայերի գործունեությունը ավելի լայն ծավալ է ստանում։ Ժամանակ առ ժամանակ նրանց տրվում են առանձնաշնորհումներ։ Կրոնի հարցում պետության հանդուրժողական դիրքը թույլ է տալիս հայերին բարգավաճել՝ պահպանելով և՛ ազգային ավանդույթներն ու սովորույթները, և՛ կապը (թեկուզ և թույլ) բուն Հայաստանի հետ։

«Իրանական Ադրբեջանի հայկական եկեղեցիների աշխարհագրական տվյալները և ճարտարապետական տիպաբանությունը» վերնագրով գրքի գլխավոր հոդվածում Ալպագո-Նովելլոն գրում է, որ պատմական սուղ տեղեկությունները, երբեմն լրիվ բացակայությունը, ստիպել են տալիս հետազոտողներին հիմնականում հենվել տեղաբնիկների լանավոր խոսքի վրա։ Աշխարհագրականորեն բուն Հայաստանից կտրվածությունը, տեղական էթնիկ տարրերի ու կրոնական տարբերությունների անխուսափելի ազդեցությունները, բնակլիմայական պայմանները թելադրել են այս շինություններին ուսումնասիրելու ուրույն ճարտարապետական ձևեր՝ համադրելով տեղականն ու ազգայինը թե՛ ճարտարապետական ձևերի և թե՛ շինարարական տեխնիկայի առումով։ Բայց ինչպես հայ ճարտարապետության մեջ ընդհանրապես, այստեղ ևս XV—XVIII դդ. վերածնունդ են ապրում բուն հայկական ձևերը, ինչպես Մուժումբարի, Մահլամի, Կարա-քիլիսեի ս. Սարգիս բազիլիկ եկեղեցիները, ս. Թազե և ս. Ստեփանոս վանքերի գլխավոր եկեղեցիները, Խոյի ս. Աստվածածնի, Ղարաբաղի ս. Պետրոսի գմբեթավոր եկեղեցիները և այլն։ Իսկ Գյարդարագի ս. Գևորգ, Դարաշամբի ս. Աստվածածին, Նախիջևան Թափայի ս. Աստվածածին և Ֆանայի եկեղեցիները թե՛ հատակագծով և թե՛ արտաքուստ կրում են տեղական իրանա-սասանյան շինարվեստի խոր ազդեցությունը։ Շինանյութը լեռնային շրջաններում կոպտատաշ, շատ հաճախ անտաշ քարն է, հովիտներում՝ աղյուսը և պարզապես կավածեփ շինությունները։ Եկեղեցիների ներքին մանրամասներից հանդիպում ենք հարթ փայտե սյուներով տանիքների ու հաղարաշեն կառուցվածքով գմբեթների։ Ա. Ալպագո-Նովելլոն նկատում է, որ այս երևույթը (ժողովրդական տան մոդելը՝ հաղարաշեն երդիկ և գերանների վրա հանգչող փայտե տանիք) հայ եկեղեցաշինության մեջ հազվադեպ է օգտագործվում, բացառությամբ Առաքելոց վանքի գավթի։

Իրանի հայկական եկեղեցիների համառոտ աղյուսակով հեղինակը փորձում է դասակարգում մտցնել տարածում գտած եկեղեցական տիպերի մեջ, իսկ ըստ շրջանների առանձնացված ծխական եկեղեցիների այբբենական ցուցակը ամբողջական պատկերացում է տալիս այստեղ գտնվող կրոնական շինությունների տեղի, ժամանակի, շինանյութի և այսօրվա վիճակի մասին։

Գրքի վերնագիրը կրում է Սորհուլ անունը, որը մեղ թվում է պայմանական, քանի որ հենց Սորհուլ գյուղի ս. Հովհաննես եկեղեցուն նվիրված է մի փոքր հողված միայն։ Սույն եկեղեցին կառուցվել է 1840 թ., համանուն գյուղի բարձունքում։ Գմբեթավոր սրահ է, երկհարկ նախադավթով, որի վրա բարձրանում է աշտարականման բարձր թմբուկով զանգակատունը։ Գլխավոր կենտրոնական գմբեթը արտաքուստ գլանաձև է, իսկ վեղարը՝ կոնաձև։ Աբսիդի թաղը ավարտվում է արտաքինից բրգաձև փոքր գմբեթով։ Ներքին գլխավոր հարդարանքը կենտրոնական կախովի առագաստների վրա հանգչող գմբեթն է։ Շինանյութը աղյուսն է։ Իտալացի հեղինակը նկատում է, որ եկեղեցու աշտարակաձև զանգակատունը հիշեցնում է Իրանի սելջուկյան դամբարանները, հովհարաձև վեղարը զուտ հայկական երևույթ է, իսկ արտաքին պատերի կեղծ կամարաշարը «արևմտյան» մոտիվներ են, բայց, ավելի ճիշտ, ներկայացնում են Անիի դպրոցի առանձնահատկությունները։ Ենթադրվում է, որ եկեղեցին կառուցվել է այն ժամանակ, երբ ֆրանսիացի ճարտարապետներն ու Թիֆլիսի ռուս արհեստավորները Թավրիզում կառուցում էին մի շարք եկեղեցիներ, և որ Սորհուլի եկեղեցին էլ դրանցից մեկն է։ Լարող է լինել։

Գիրքը դարդարում են գունավոր լուսանկարների հավաքածուն և չափագրական-վավերագրական հատակագծերը։

Ա. Ժ. ՀԱԼԱՋՅԱՆ